Բարև Ձեզ հարգարժան պարոն Հակոբյան, համայնքների ղեկավարներ, դպրոցի տնօրեններ:

2017-2018 ուստարում սեպտեմբերի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի 112 հանրակրթական դպրոցում սովորում է 14.553 , այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 288 աշակերտ :Առաջին դասարան է հաճախում 1553 աշակերտ, իսկ դպրոցների նախադպրոցական խումբ ՝ 64 երեխա: 2017թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կանոնակարգված կազմակերպել ենք մարզի, արտերկրի, ՀՀ այլ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ դպրոցներից մարզի դպրոցներ ընդունված և տեղափոխված սովորողների հաշվառումը:

Այսօր անդրադառնալու եմ ներքոհիշյալ հարցերին, առկա խնդիրներին և առաջիկա անելիքներին:

1. **Տնօրենի՝ ՀՀ օրենքներով, պաշտոնի նկարագրով և դպրոցի կանոնադրությամբ վերապահված լիազորությունների և սահմանված պարտականությունների մասին**

Ակնհայտ է ,թե ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ , երբ դպրոցի տնօրենը ժամանակին չի կատարում կամ ոչ ճիշտ է կատարում իր պարտականությունները: Բնական է , որ Ձեր գործունեությունից է կախված դպրոցի մյուս օղակների աշխատանքների ընթացքը:

Այսօր բովանդակային և գործնական իմաստով առկա են կոպիտ բացթողումներ, սխալներ, որոնք արձանագրել է նաև ՀՀ կրթության պետական տեսչությունը:

Առաջիկա հանդիպումներին անդրադառնալու ենք դպրոցի կանոնադրության 48-րդ կետի 1-ին,4-րդ ,9-րդ,10-րդ ,12-րդ և 15-րդ ենթակետերի, որոնց կատարումն իրականացնում ենք յուրովի, ոչ համակարգված: Իհարկե, կլինեն բացառություններ, կլինեն մշակված օրինակելի տարբերակներ և մեխանիզմներ, որոնք կետ առ կետ դուք կներկայացնեք , կքննարկենք և կփորձենք հասանելի դարձնել բոլորին:

Հարգելի տնօրեններ, դպրոցի գործունեությունը լուսաբանող ցուցատախտակին ամրացրեք նաև դպրոցի ուսումնական պլանը, տվյալ ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը և աշխատողների կողմից ստորագրված աշխատաժամանակը սահմանող թերթիկի պատճենը՝ խիստ հետևելով դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանմանը:

Մինչ քննարկումները ստուգեք ձեր դպրոցի առարկայական ծրագրերի կատարողականները՝ բացառելով գերակատարումները և թերակատարումները:/մարզի 112 դպրոցներից 29-ում հայտնաբերվել են այդպիսի տարաբնույթ խախտումներ/:

Նշեմ, որ 2018 թվականի հունվարի 8-ից հրամանագրքերի փոխարեն կկիրառենք միայն աշակերտների և աշխատողների հրամանների գրանցամատյանները և հրամանների թղթապանակները, որոնց մասին կտեղեկացնենք լրացուցիչ: Բոլոր դպրոցներին ուղարկել ենք էլեկտրոնային տարիֆիկացիոն մատյանի օրինակը և 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն մատյանները վարչություն պետք է ներկայացնել էլեկտրոնային տարբերակից տպված՝ բացառելով ջնջումները և աշխատողների ոչ համակարգված անվանացանկը:

Սյունիքի մարզի 112 ուսումնական հաստատությունների տնօրենների հետ կազմակերպված և համակարգված , առանց այլ մարդկանց միջնորդության աշխատելու համար առաջարկում եմ Կապանում, Գորիսում, Սիսիանում և Մեղրիում ստեղծել 4 խորհուրդ՝ յուրաքանչյուրը կազմված 2-3 տնօրենից:

2.Դպրոցականների առողջության պահպանման խնդիրներն ուսումնական գործընթացում

Կներկայացնեմ մի քանի խնդիրներ, որոնք լուծում են պահանջում հենց դպրոցից՝ ուսումնական գործընթացում:

ա/ Դպրոցականների անձնական հիգիենայի, օրվա ռեժիմի ուսուցումը սկսել տարրական դպրոցից և լինել խիստ հետևողական:

բ/ Պարբերաբար իրականացնել սովորողների պայուսակների ծավալի և քաշի վերահսկողությունը: Գիտենք, որ առանց այն էլ ծանր են մեր դասագրքերը, իսկ երբ ուսուցիչը պահանջում է բառարան, լրացուցիչ տետրեր և գրքեր , ապա պայուսակի քաշը կրկնապատկվում է: Իրականում կշռել ենք 2-րդ դասարանցու պայուսակ , որի քաշը եղել է 6կգ 700գրամ:

Ըստ սահմանված կարգի՝ սովորողների կողմից բերվող դասագրքերի և գրենական պիտույքների հավաքածուի քաշը 1-ին, 2-րդ դասարանների սովորողների համար չպետք է գերազանցի 1,5 կգ-ը, 3-րդ, 4-րդ դասարանների սովորողների համար՝ 2 կգ-ը, 5-6-րդ դասարանների սովորողների համար՝ 2,5 կգ-ը, 7-8-րդ դասարանների սովորողների համար՝ 3,5 կգ-ը, 9-12-րդ դասարանների սովորողների համար՝ 4 կգ-ը:

գ/Ուսումնական հաստատություններում դպրոցական սննդի կազմակերպման մասին:

Դպրոցի ճաշարանում կամ բուֆետում դպրոցականներին սնունդ տալու նպատակն է՝ ապահովել աշակերտների հավասարակշռված, անվտանգ և որակյալ սնունդը՝ նպաստելով երեխաների առողջության պահպանմանը և կրթության որակին: Սննդի կազմակերպման հիմնական պատասխանատվությունը կրում է դպրոցի տնօրենությունը:

Ուստի, հարգելի տնօրեններ, դպրոցի ճաշարանում կամ բուֆետում փակցնում եք ձեր կողմից հաստատված և կնքված 2 փաստաթուղթ՝

1. Վաճառքի համար արգելված ճաշատեսակների և մթերքների ցանկը՝ օգտվելով ուղեցույցից:

2. Այն ճաշատեսակների և մթերքների ցանկը,որը վաճառվում է ձեր դպրոցում:

դ/ <<Առողջ ապրելակերպ>> առարկայի կարևորության և դասավանդման որակի մասին:

8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ: Այն ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին: Դասընթացը դասավանդվում է 2018թ. հունվար-փետրվար ամիսներին, ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում գրանցումները կատարվում են առանձին էջում: Շատ հաճախ դպրոցներում կարևորություն չեն տալիս այս առարկային , իսկ 2016-2017 ուստարում ընդանրապես չեն դասավանդվել մարզի 6 դպրոցում:/Մուցքի մ/դ, Արևիսի մ/դ, Բարձրավանի մ/դ, Լեռնաձոր մ/դ, Նորաշենիկի մ/դ/

ե/ Դասացուցակի կազման և դասամիջոցների տևողության մասին

Ուշադրություն դարձրեք սովորողների օրական ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն թույլատրելի նորմերին, սովորողների շաբաթական ծանրաբեռնվածության

առավելագույն թույլատրելի նորմերին, դասացուցակին ներկայացվող հիգենիկ պահանջներին և հաստատության 1-12-րդ դասարանների առարկաների բարդության աստիճանի սանդղակին, ավելի մանրամասն ուսումնասիրեք և կիրառեք առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանը՝ օգտվելով 2017թ. թիվ 2 տեղեկագրից:

3. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում

1) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ՝ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ: Ուսումնական գործընթացը կազմակերպելուց հետևեք ՀՀ կրթության և գիտության նախարարի 20.06.2017թ. տրված թիվ 711-Ն հրամանի 20-րդ կետի 2) 9) 13): 14) 15) 17 ենթակետերին: Մարզի 6 դպրոցում գրանցվել է , որ 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանով սովորողների տնօրինմանը հանձնված 3 ժամը հատկացված է եղել պարտադիր առարկայացանկից ընտրված առարկաներին և գրանցվել դասամատյաններում/ /Սպանդարյանի, Ծղուկի, Տոլորսի, Ույծի, Դաստակերտի և Շիկահողի մ/դ/:

4.ՀՀ դպրոցականների 2017-2018 ուստարվա առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման մասին

Ի գիտություն ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի Հայաստանի Հանրապետությունում դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգը՝ ցանկանում եմ , որ օլիմպիադաները կազմակերպենք այնպես, որ հասնենք ներքոհիշյալ նպատակներին ու լուծենք խնդիրները.

1) Տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը և նրանց հետ անհատական աշխատանքի կազմակերպումը,

2) Ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների զարգացումը և այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը,

3) Առարկայական խմբակների, նախասիրական պարապմունքների և այլ ուսումնական աշխատանքների խթանումը,

4) Ստեղծագործ ուսուցիչների, բուհերի դասախոսների, գիտահետազոտական հիմնարկների աշխատակիցների և ուսուցիչների ներգրավումը օժտված երեխաների հայտնաբերման ու ուսուցման գործում,

5) Հայաստանի Հանրապետության միջազգային օլիմպիադաներին, մրցույթներին մասնակցող թիմերի ձևավորումը և նրանց հետ աշխատանքի կազմակերպումը:

Պարոն մարզպետ, թույլ տվեք ըստ կետերի կազմակերպել քննարկումներ,վեր հանել առկա դժվարությունները , ըստ առաջարկությունների մշակել նախագիծ՝ մարզում օլիմպիական խմբակներ ձևավորելու և հետագա աշխատանքները կազմակերպելու համար:Իսկ մինչ այդ, հարգելի տնօրեններ, Ձեր հրամանով ձևավորված դպրոցական կազմկոմիտեին հանձնարարեք առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա դպրոցական փուլի հաղթողներից տարածքային փուլին ներկայացնեն միայն արժանավորներին, իսկ այն աշակերտները, ովքեր հաղթել են ձեր դպրոցում , բայց դեռ շատ աշխատելու տեղ ունեն, նախ խրախուսեք , ապա մտածեք նրանց հետ անհատական աշխատանքի կազմակերպման և այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքների հաղորդման մասին:Արդյունքում՝ օլիմպիադաներին կմասնակցեն արժանիները, չեն լինի ավելորդ խոսակցություններ, արտագրություններ, ի վերջո, մենք մեր դպրոցում լավ գիտենք, այդ աշակերտը օլիմպիական է , թե՝ ոչ:

5.<<Dasaran.am>> ծրագրի և դպրոցների պաշտոնական կայքէջերի մասին

Նախ շնորհավորում եմ Որոտանի/Սիսիան/ հիմնական , Շամբի, Լիճքի և Եղեգի միջնակարգ դպրոցներին , որոնք <<**Dasaran.am>> ծրագրում** 2016-2017 ուստարում կատարած աշխատանքների համար արժանացել են տարբեր խրախուսանքների և նվերների՝ որպես << Նոր սերնդի դպրոց>> հանրակրթական դպրոցների վարկանիշավորման մրցույթում հաղթողներ:

Մարզի 112 դպրոցից 46-ը ընդգրկված են լիարժեք, 40-ը՝ ոչ լիարժեք, իսկ 26-ը՝ թերի աշխատանքներ կատարող դպրոցների ցանկում:Նշեմ, որ այդ ծրագրում դպրոցի ոչ լիարժեք կամ թերի լինելու պատճառը տնօրենի և տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից <<**Dasaran.am>> ծրագրի** աշխատանքները ոչ ճիշտ կազմակերպելու և հետևելու արդյունք է: Նախ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ ուսուցիչները մուտքագրումները կատարեն դպրոցում,իսկ դասղեկներն իրենց դասարանը ըստ օրվա դասացուցակի դասաժամերի՝ ներկայացնեն տնօրենի՝ուսումնական աշխատանքների գծով տեղակալին:

Այժմ ներկայացնեմ մարզի դպրոցների պաշտոնական կայքէջերի վիճակը : Կայքերի կարգավորման աշխատանքները կկատարենք հստակ քայլերով և միասնական:

Նախ կկարգավորենք 5 պատուհան՝ <<Մեր մասին>>,<<Ֆինանսական անկյուն>>,<<Ներքին գնահատում>>, <<Գործող խորհուրդներ>>, <<Ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան>>:

Նշեմ , որ առանց Ձեր դպրոց այցելելու , Ձեր կայքից յուրաքանչյուր մարդ կարող է զգալի տեղեկություններ , տպավորություններ ստանալ դպրոցի մասին: Տարօրինակ է, որ նշում եք դպրոցի 50 կամ 100-ամյակ,բայց կայքի այդ պատուհանը դատարկ է մարզի 112 դպրոցից 81 -ում , կամ սահմանված կարգի համաձայն <<Ներքին գնահատումը>> պետք է տեղադրել կայքում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 5-ը , բայց 81 դպրոցը չի տեղադրել, . 82 դպրոց չի տեղադրել 2017-2018 1-ին կիս. հաստիքացուցակը, 8 դպրոց՝ նախահաշիվը կամ հասանելի չեն գործող խորհուրդների անվանացանկերը և ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը:

6.Մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպման մասին

Ըստ <<Մասնագիտական կողմնորոշում մեթոդական կենտրոն>>ՊՈԱԿ-ի և <<Վորլդ Վիժն Սյունիք ՏՁԾ>>-ի ներկայացրած տվյալների՝ 2014- 2017թթ. մարզում վերապատրաստվել են 40 դպրոցների 93 մանկավարժ, ովքեր ամիսը երկու անգամ պետք է դպրոցում անցկացնեն մասնագիտական կողմնորոշման դասընթաց 8-11-րդ դասարանների աշակերտների համար: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շատ դպրոցներում դասընթացները կազմակերպվում են ոչ պատշաճ մակարդակով, առկա չէ տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցը :

Մեր այցելություններից հետո մի քանի դպրոցներ վարչություն ներկայացրեցին մասնագիտական կողմնորոշման դասընթացի ժամանակացույցը, իսկ երբ մեզ հասանելի լինի ձեր դպրոցի ամսվա ուսումնադաստիարակչական պլանը, որում ներառված կլինեն նաև այդ դասընթացների օրերը և ժամերը , ապա ավելորդ թղթավարություն չի լինի:

Ամփոփելով զեկույցս՝ նշեմ , որ հետևողական ենք լինելու , թե ինչպես եք լուծում վերը նշված խնդիրները՝ յուրաքանչյուր տնօրենից պահանջելով պատասխանատվության բարձր աստիճան , աշխատանքում՝ որակ: